

Տեմինիստական, քվիր միջազգային Փառատոն # 2 **Գենդերային կառուցվածքներ | Մարդու դռներ**

Րաֆֆի Դավթյանի «Մարդու դռներ» խորագրով նախագիծը ներառում է տարածության մեջ ինստալացված, բազմակի պատկերավորությամբ ներկայացված ֆոտո-ֆիգուրներ-մարդկային մարմիններ: Մարմնական ֆիգուրատիվության տարածությունն այս նախագծում բեմականացված է որպես այլաբանական «հանրային ոլորտ», որտեղ գեղարվեստական արտահայտության միջոցով ոչ միայն վերակենդանացվում է սեռի դիսկուրսը, այլև վերաակտուալացվում է սեռային բացառման, համակարգային ճնշումների երևույթը: Ինստալացիան վերածվում է ֆիգուրների «բազմության» մակետի, որոնք «գենդերային անհանգստությամբ» համակված, տեսարժան պոռթկման մեջ ներկայացնում են սեփական սուբյեկտիվությամբ տոգորվածության տեսարանը: Անհանգստացնող դինամիկայի մեջ բեմադրված՝ յուրաքանչյուր ֆիգուր երևութանում է որպես որոշակի կերպարի կրողը, որոշակի պերսոնաժի, որին կարևոր է «տարբեր», «այլ», «ուրիշ» ու «տարօրինակ» սուբյեկտիվության շարքը դասել, և մարմինները դառնում են մաքուր նշան, մշակութային և սոցիալական դաշտի նշանակող:

Արվեստագետը, ֆիգուրների չնշանակված, չկարգավորված համադասավորության ժեստով ասես ձգտում է բացարձակ ազատությունների ինչ-որ մի «անարխիական» տարածության՝ որպես աշխույժ վազքի՝ ճնշումների ու ենթարկումների սահմաններից դուրս գտնվող բաց դաշտի փոխաբերության: Մինչդեռ նախագիծը երթուղիներ է փնտրում և հարցադրում է կապանքների մեջ առնող ինչ-որ վարչական-նորմատիվային պայմանականությունից ազատվելու հնարավորության միտքը, ճնշման «կենտրոնը» ծանրորեն կախված է յուրաքանչյուր մարմնի վրա:

Յուրաքանչյուր առանձին ինքնության կրողները, որոնց թիվը նախագծում փոքր չէ, իրենց վրա կրում են տիրական հետերոսեռական օրենքի՝ ֆալոցենտրիզմի բեռը: Յուրաքանչյուր ֆոտո-ֆիգուր սեփական սեռական օրգաններին է սեղմել տեղական դիտողի համար տարօրինակ մի առարկա՝ դռան մեխանիկական մետաղյա «քուբեհ» (բառը պարսկերեն նշանակում է այն, ինչով խփում, թակում են): Անցյալում քուբեհները Իրանում ունեին ազդանշան տալու, հյուրի գալստյան մասին տեղեկացնելու նշանակություն. դրանք օգտագործվում էին դռները թակելու համար: Քուբեհներն օգտագործում էին նաև սեռային տարբերակման համար. յուրաքանչյուր դռան թակիչ ռճավորված էր ֆալոսի կամ հեշտոցի նմանությամբ: Իրանում դրանք դրվում էին մասնավոր և հանրային հաստատությունների դռների ու դարպասների վրա: Թեև տեխնոլոգիական նորարարությունների ներդրմամբ դրանք գործնականում կորցրել են իրենց կիրառական նշանակությունը՝ քուբեհներն այժմ էլ ներկա են երկրի հասարակական համատեքստում՝ ի սեր պահպանողական ծեսերի և գենդերային նախապաշարմունքներով, կարծրատիպերով լի սովորույթների: Սեռային քուբեհները երկրում սկսեցին կիրառվել Իսլամի տարածման հետ: Սեռային տարբերակման այդ խորհրդանիշները թակելիս տարբեր ձայնային ազդանշաններ են հանում. արականը՝ ցածր և խուլ, իգականը՝ բարձր և զնգուն: Հյուրընկալողները հնչող ձայնի բնույթից տեղեկանում էին հյուրի սեռական պատկանելության մասին: Եթե այցելուն կին էր, ապա դռան մոտ նրան դիմավորում էր նույն սեռի ներկայացուցիչը և ընդհակառակը: Մյուս կողմից, եթե հյուրընկալողներն իմանում էին անձանոթ տղամարդու գալստյան մասին, ապա տան կանայք պարտավոր էին ծածկվել ոտքից գլուխ...

Քուբեհների՝ որպես սեռի տարբերակման գործիքի օգտագործման իմացաբանական էֆեկտը նախագծում ստանում է այսպիսի տեսք՝ կենսաբանական սեռը ենթարկվում է սոցիալական և մշակութային կարգին,

սեռային տարբերակումը նախորդում է սոցիալականին և անխուսափելիորեն կախված է սոցիալականից՝ հղելով ստորակարգության բարձրագույն կետին՝ «հետերոսեռական օրենքին», որի ներսում, ինչպես համարում է Ջ. Բաթլերը, սուբյեկտիվությունը պերֆորմատիվ է և թատերականացված ձևով վերարտադրում է այդ հետերոսեռական օրենքի տիրական սոցիալական նորմերը: Մարմինը չի սահմանափակվում ֆիզիկականով, ֆիզիկական մարմնի ավարտը դուռ է բացում դեպի սոցիալականը:

Պարսկական քուբեհների օգտագործմամբ՝ արվեստագետը չի փորձում «տեղայնացնել» խնդիրը: Մարմնի, սեռականության, սուբյեկտիվության մասին ներկայացված «պատմությունը», մեծ հաշվով, ուղղված է դեպի վերագգայինը, համընդհանրականը: Սեռի խնդիրը Րաֆֆի Դավթյանի համար հրատապներից մեկն է՝ հատկապես հաշվի առնելով արվեստագետի կենսագրական գործոնը և այն երկրի (Իրան) համատեքստը, որտեղ նա ծնվել և ապրում է:

Ինստալացիայի տարածությունը վերածվում է մի շրջանակի, որտեղ «գենդերային անհանգստությունը» ցանկանում է խախտել տրված աշխարհակարգը և հիերարխիայի անսասան հետևողականությունը:

Նախագիծը ճնշող կենտրոնից «փախուստի» ու ճնշումների դեմ պայքարի մասին է, նաև՝ հրավիրում է խորհել իշխող դիսկուրսը սասանող տարակենտրոնացման երթուղիների ու շեմերի շուրջ: